



Հայրենադարձության եւ հիմնավորման “ԵՐԿԻՐ” Հ.Կ. Միության ԲԱՑ ՆԱՄԱԿԸ

«Հայրենադարձության մասին» օրենքի ընդունման եւ հայրենադարձության գործընթաց մեկնարկելու վերաբերյալ

Ա.

Հայաստանի տարածքը, լինելով հայ ժողովուրդի բնօրրանը, ազգի ձեւավորումից ի վեր ընկալվում է որպես սեփական պատմական հայրենիք: Հայրենի հողի վրա ապրելու եւ արմատավորվելու իրավունքն, սկսած Արտաշեսյան հարստության ժամանակաշրջանից առ այսօր, որպես հայ ժողովրդի գոյատեւման առաջին գրավական, պարտադրել է ազգային եւ պետական բոլոր կառույցներին հետապնդել ազգահավաքման բնական ծրագրի իրականացումը: Սա ամեն բանից բարձր է, ամեն բանից խոշոր հրամայական է:

Դժբախտաբար, հայաթափման գործընթացը եւս ունի ավելի քան մեկ եւ կես հազարամյակի պատմություն: Սկսվելով բյուզանդա-պարսկական մրցակցության ժամանակներից, այն ահագնացել է արաբական եւ, առանձնապես, օսմանյան-թուրքական տիրապետության ժամանակներում՝ իր գագաթնակետին հասնելով քսաներորդ դարի սկզբին՝ հայոց ցեղասպանության եւ նրան հաջորդած տարիներին: Խորհրդային ժամանակաշրջանում հերթափոխն անցավ ադրբեջանցի թուրքերին, որոնք ստանձնեցին Արցախի, Ուտիքի եւ Նախիջեւանի հայաթափումը լիակատար ավարտին հասցնելու գործը: 1988 թվականից առ այսօր, մանավանդ, Հայաստանի Հանրապետության իրավական եւ Արցախի փաստացի անկախացումից հետո, Թուրքիայի եւ նրա դաշնակից պետությունների կողմից Հայաստանի հայաթափման ծրագիրը շարունակվում է Հայաստանի շրջափակման, տարածաշրջանային հաղորդակցական եւ տնտեսական խոշոր նախաձեռնություններից մեկուսացման միջոցով:

Հայաթափման այս քաղաքականության համաղետային արդյունքները հայտնի են: 18րդ դարում՝ դաշտային Արցախի, Քաշաթաղի, Քարվաձառի հայ բնակչության արտագաղթ, 19-րդ դարում եւ 20րդ դդ. սկզբներին՝ Արեւմտյան Հայաստանի նահանգների հայության ոչնչացում, 20-րդ դարում՝ Ուտիքի եւ Նախիջեւանի հայաթափում: Եվ ի վերջո, 1988-2004 թթ. Հայաստանի եւ Արցախի շրջափակման, Զավախքում վրացական կառավարության կողմից նպատակասլաց կերպով իրականացվող հակահայկական քաղաքականության արդյունքում տարածաշրջանից շուրջ 1,5 մլն հայերի արտագաղթ:

Վերջին շուրջ մեկ ու կես տասնամյակում տեղի ունեցած արտագաղթն ունեցել է մի շարք խիստ բացասական հետեւանքներ, որոնց ազդեցությունը շարունակական բնույթ ունի եւ ողջ ծանրությամբ զգացնել է տալու ապագա տասնամյակներում: Մասնավորապես, առանձնացվում են հետեւյալ հիմնական հետեւանքները.

Ա- Տղամարդկանց թվի նվազում, ինչը համապատասխանաբար պատճառ է դառնում ամուսնությունների եւ աճող ընտանիքների թվի կտրուկ նվազման:

Բ- Բնակչության, այդ թվում աշխատանքային տարիքի, ծերացում, երեխաների թվի նվազում, ծնելիության անկում:

Գ- Պաշտպանունակության եւ ռազմական հզորության անկում: Այս տեսանկյունից խիստ բացասական հետեւանքներ ունի, մասնավորապես,

սահմանային բնակավայրերից բնակչության արտահոսքը: Մտահոգիչ է նաև ազգային բանակ զորակոչվողների թվի նվազումը:

Դ- Նյութական և մարդկային որակյալ ռեսուրսների արտահոսք, որակյալ աշխատուժի վերարտադրության բնականոն ընթացքի ընդհատում, աշխատանքային տարիքի սերնդափոխության շղթայի օղակների խաթարում, և այլն:

Մյուս կողմից, անհրաժեշտ է գիտակցել, որ արտագաղթողների արդեն երբեմն երկրորդ, ընդհանրապես՝ երրորդ, և առավելագույնը՝ չորրորդ սերնդի ավելի քան 95 տոկոսը կորցնում է իր ազգային դիմագիծը, դադարում հայ լինելուց:

Ահազանգող է նաև Հայաստանում բնակչության ներքին տեղափոխությունների (միգրացիա) վիճակը: Այդ գործընթացը թողնված է ինքնահոսի և ընթանում է դեռևս խորհրդային ժամանակներից հարթեցված ուղիով՝ տեղաշարժ գյուղական բնակավայրերից դեպի քաղաքային բնակավայրեր: Այդ գործընթացի հետեւանքով, Հայաստանի սահմանային ռազմավարական հատվածներից հազարավոր ընտանիքներ տեղափոխվում են մայրաքաղաք և մարզային արդյունաբերական քաղաքներ: Թեև Խորհրդային Միության փլուզումից հետո խոշոր արդյունաբերական ձեռնարկությունների անգործությունը պետք է որ տրամաբանորեն հանգեցնեի դեպի քաղաք բնակչության ներհոսքի նվազմանը, սակայն, տեղի ունեցավ հակառակը՝ վերջին տասնամյակում, գյուղական համայնքների դատարկումն ընդունել է էլ ավելի լայն ծավալներ: Արդյունքում՝ խիստ անհավասարակշռված է բնակչության տեղաբաշխումը հանրապետության տարածքի վրա: Ըստ պաշտոնական տվյալների Հայաստանի բնակչության 60 տոկոսից ավելին կենտրոնացված է Երևանում և Արարատի, Արմավիրի ու Կոտայքի մարզերում: Մի շարք սահմանային բնակավայրեր, մասնավորապես Կապանի մարզում, անգամ դպրոցներ չունեն և կանգնած են անհետանալու եզրին:

Այս համադետային երեւոյթները, ցավոք, ազգի բոլոր մակարդակներում իրավիճակի ողջ ծանրությամբ և պատշաճ կերպով չեն գիտակցվում, և սա գուցե այն պատճառով որ, խնդիրը չափազանց բարդ է և պահանջում է արմատական և համալիր լուծումներ:

Հայրենադարձության և հիմնավորման «Երկիր» հասարակական կազմակերպությունների միությունը գտնում է, որ արտագաղթի Հայաստանին պատճառած և պատճառելիք վնասները վերացնելու համար արդեն բավարար չեն բնակչության հետագա արտահոսքը խոչընդոտող հնարավոր միջոցառումները: Եկել է հայրենադարձության ազգային քաղաքականություն մշակելու և իրականացնելու ժամանակը:

Բ

Որպեսզի հնարավոր լինի ճիշտ գնահատել հայրենադարձության հեռանկարները, պետք է հստակ պատկերացում կազմել, թե որոնք են հայրենադարձության ռեսուրսները՝ այսինքն արտերկրներում բնակվող հայության այն զանգվածները, որոնք համապատասխան միջոցառումների իրականացման դեպքում պատրաստ կլինեն հայրենադարձվելու: Յուրաքանչյուր խմբի և ենթախմբի նկատմամբ անհրաժեշտ է դրսեւորել տարբերակված մոտեցում: Առավել ևս, պետք է տարբերակել ավանդական սփյուռքը, որի հիմքն է կազմում Մեծ եղեռնից մազապուրծ եղած հայությունը և հետխորհրդային ժամանակաշրջանի արտագաղթի հետեւանքով առաջացած այսպես կոչված «նոր սփյուռքը»:

1. Մերձավոր Արեւելքի երկրների հայ գաղութներ:

Ներկայումս, ԱՄՆ կողմից տարվող Մերձավոր եւ Միջին Արեւելքը վերակազմակերպելու քաղաքականության հետեւանքով, տարածաշրջանը մտել է քաղաքական անկայունության փուլ, որն էլ ավելի սրվելու միտում ունի: Քաղաքացիական պատերազմի շեմին է կանգնած Իրաքը, բացահայտ են ԱՄՆ-ի սպառնալիքները Սիրիայի նկատմամբ, Լիբանանն աստիճանաբար վերածվում է հիմնականում մահմեդական երկրի: Նշված երեք երկրներն էլ ունեն հոծ հայ բնակչություն, որի մի մասը մեր համապատասխան հետաքրքրության եւ աջակցության դրսեւորման պարագայում, պատրաստ է հայրենադարձվելու:

Իրաքահայության պարագայում, անտարբերությունը, որը դրսեւորում ենք անընդունելի է, եւ, ի վերջո, հանգեցնելու է նրանց զանգվածային արտագաղթի դեպի արեւմտյան երկրներ, հետագա անխուսափելի ուժացման վտանգով:

2. Իրան

Թեեւ Իրանը Հայաստանի ավանդական դաշնակիցն է եւ նրա կողմից իրականացվող ներքին քաղաքականությունն ընդհանուր գծերով երաշխավորում է երկրում բնակվող հայության մշակութային ինքնուրույնությունը, սակայն երկրի ապագա կացությունը անորոշ է: Մասնավորապես, հստակ է ամերիկա-իրանյան փոխհարաբերությունների որոշակի լարվածություն, որը կարող է վերածվել ընդհարման:

Դա հարկադրում է Իրանում բնակվող մեր հայրենակիցներին ապահովագրել իրենց ապագան, այդ թվում բնակարաններ գնելով Հայաստանում, մեծ մասամբ՝ մայրաքաղաքում: Միայն մեր պետության քայլերից է կախված կօգտագործեն, արդյոք, իրանահայերը Հայաստանը որպես ցատկահենավայր Արեւմուտք գաղթելու համար, թե նրան կվերաբերվեն որպես իրենց հայրենի երկրի, պիտանի մշտապես բնակվելու համար:

3. Եվրոպա եւ Ամերիկյան մայրցամաք

Ներկայումս, ըստ ընդունված հաշվարկների, Կենտրոնական ու Արեւմտյան Եվրոպայի երկրներում եւ Ամերիկյան մայրցամաքում բնակվում է շուրջ մեկ ու կես միլիոն հայ, այդ թվում՝ ավելի քան մեկ միլիոն՝ միայն ԱՄՆ-ում:

15-18-րդ դդ. ընթացքում Կենտրոնական Եվրոպայի երկրներում (Ռումանիա, Լեհաստան, Հունգարիա, Չեխիա) ձեւավորված հայ գաղութների բազմահազարանոց բնակչությունը ներկա դրությամբ ամբողջովին ձուլվել է: Նույն ճակատագիրն է սպասում նաեւ ԱՄՆ-ի եւ Արեւմտյան Եվրոպայի գաղութների հայության այն խմբին, որը կազմում են 20րդ դարի Մեծ Եղեռնից մազապուրծ եղած զանգվածներն ու նրանց սերունդները, ինչպես նաեւ մինչեւ 1970-ական թթ. արեւելյան սփյուռքից արտագաղթածները, որոնք արդեն մեծամասամբ փաստացիորեն ձուլվել են եւ հայ են միայն անվանապես:

Սակայն, 70-թթ. Միջին Արեւելքից եւ Իրանից Հյուսիս-ամերիկյան ցամաքամաս գաղթած եւ առանձնացված ու կենտրոնացված գաղութներում ապրող հայության մեջ գոյություն ունի միջին կամ բարձր կարողությունների տեր հայության մի փոքրաթիվ զանգված, որը դրականորեն է տրամադրված Հայրենիք վերադառնալու գաղափարի նկատմամբ:

4. Ռուսաստան եւ ԱՊՀ երկրներ

Ռուսաստանում եւ ԱՊՀ երկրներում ներկայումս տարբեր հաշվարկներով ապրում է 2-2,5 միլիոն հայ: Այդ հայ գաղթական բնակչության մեծամասնությունը հեռացել է Հայաստանից 1991թ. հետո: Ինչպես եւ Եվրոպայի ու Ամերիկյան մայրցամաքի պարագայում այս երկրներ գաղթած ազգաբնակչությունը արագ տեմպերով ձուլման է ենթարկվում՝ յուրացնելով տեղի բարբերը, լեզուն ու մշակույթը:

Միաժամանակ, ի տարբերություն արեւմտյան երկրներում ապաստանած հայության, ԱՊՀ երկրների եւ, մասնավորապես Ռուսաստանի հայ բնակչության մեծ մասը բնիկների կողմից ենթարկվում է հալածանքների իր «կովկասյան»

պատկանելության համար: Դա վկայում է այն մասին, որ գոյություն ունի նշված տարածքներից հայրենադարձվելու պատրաստ մեծ զանգված:

Գ

Ներկայումս, երբ Հայաստանում ընթանում են սահմանադրական բարեփոխումների քննարկումները, Հայրենադարձության եւ հիմնավորման «Երկիր» հասարակական կազմակերպությունների միությունը գտնում է, որ ստեղծվել է մի եզակի հնարավորություն ամրագրելու հայրենադարձության գործընթացի կարելիությունը՝ այն վերածելու պետական քաղաքականության բաղկացուցիչ տարրերից մեկի: Այդ նպատակով կոչ ենք անում անհապաղ նախաձեռնելու հետեւյալ միջոցառումները.

1. ՀՀ սահմանադրության բարեփոխված տարբերակի ընդունումից հետո, մշակել եւ ընդունել «Հայրենադարձության մասին» օրենք, որի մեջ կհստակեցվի հայրենադարձի կարգավիճակը, արտոնությունները, կամրագրվի ամենամյա հայրենադարձության պետական ծրագրի ընդունման կարգը եւ այլն:
2. Մշակել եւ ընդունել «Հայրենադարձության եւ տարաբնակեցման պետական ծրագիր», որտեղ, մասնավորապես, կամրագրվեն.
 - Հայրենադարձների հարմարման (ադապտացմանը) եւ հասարակության մեջ համարկմանը (ինտեգրմանը) ուղղված միջոցառումները:
 - Հայրենադարձների սոցիալական իրավունքների պաշտպանությունը:
 - Որոշակի սահմանված ժամկետով հայրենադարձների տնտեսական գործունեության ազատություն եւ բարենապաստ պայմանների երաշխավորում:

Հայրենադարձության ծրագիրը համազգային բնույթ ունի եւ պահանջում է բոլորի կողմից հայ ազգի գոյատեւման համար նշված գործընթացի կենսական անհրաժեշտության գիտակցումը, այնուհետեւ՝ համակարգված աշխատանքն այն կյանքի կոչելու ուղղությամբ:

Սկսենք այսօր, համազգային ծրագրի պատվանդանի՝ նոր սահմանադրության ընդունմանը զուգընթաց հայրենադարձությունը կարելիորոշ վերը նշված գործընթացի մեկնարկով: Գիտակցենք, որ բաց թողնելով այս հնարավորությունը, կկորցնենք հայոց պետականության անվտանգությունը երաշխավորող եզակի հնարավորություն:

Սեպտեմբեր, 2005թ.